որոց քաւշաններն եւս Խաչլուայ կը պատկանէին քանի տարի առաջ։

Գիւղս 1/4 ժամ գետի յարեւելս Խաչլու կոչուած բլրակի մի տակ հաստատուած է, մի այլ (ճօճեր) ձորակի ձախ ափին վերայ։ Ունէր մի աղբիւր, գտնուեցաւ մի աղբիւրի ագուզայներ ի հինաւուրց, տեղ տեղ նորոգելով՝ զայն եւս բերած են։

Գիւղս նոր շինուած մի եկեղեցի ունի, նաեւ մի աննշան ուսումնարան, և բաւական աշակերտ։

Գերեզմանատունը գիւղիս հիւսիսն շատ զառիվերի մը գլուխը հաստատուած է, 3000-ի չափ կոշտ տապանաքարեր բռնած են մի ընդարձակ զառիվայր։ Շատ մեծ դժուարութեամբ 7-800 մեթր ելը կը բարձրացնեն ննջեցեալներն։ Այստեղ 10 արտավար տարածութիւն ունի և հակեալ ի հարաւ։

Ի վաղուց այս վայրը վանք լինելով ժողովուրդը կապուած է սրբավայրիս և չուզեր բաժանուել։

Նոր շինած եկեղեցւոյն որմերու մէկ մասն այս տապանաքարերով հիւսուած է։

Ըստ աւանդութեան գերեզմաննոցի դարի վերայ կանգնած էր մի խաչ, որ ճառագայթներն կը սփռէր ի դաշտ։ դաշտային գիւղացիք խաչի ճառագայթներու ցոլացման պատճառաւն Խաչլուս անուանած են, յետոյ Խաչլու ասուած է։ Գերեզմանատան շուրջը պարսպի հետքեր կան։

Այս գիւղացւոց վիճակն այլ գիւղօրէից հետ բաղդատելով լաւ է, ունին ընդարձակ և բերրի վարելահողեր, լեռնային մասի մէջ բազմաթիւ մարգագետիններ, որոց մի քանիին անունները կներկայացնեմ Թունտրիկներ, Խաչիկ, Եղման կամ Երդման ձոր, Կարմիր քար,